

ակերտներն փոքր ինչ նիւթապէս օգնելն էր, ունց մէջ գտնուում էին այնպիսի չքաւոր, դառն յղբաւ աշակերտներ, որոնք թղթի ու մատիտի լողն անգամ չը կարողանալով վճարել ստիպւածին տարուան կիսում թողնել ուսումնարանը և նալ վաճառականներէ մօտ ծառայել: Ուստի նմը այդ թշուառութիւնը ի նկատի ունենալով, ուստացանք ու որոշեցինք անպատճառ այդպիսիներէ օգտին մի ներկայացում տալ և ծննդեանը խորհուրդ մեծ ման գալ: Այդ խորհուրդը, ի արդէ, ծածուկ չէր և պ. Բէկնազարեանցից, և նմը օր առաջ յայտնել էինք այդ աշակերտներին, որ յետ մնային իրանց դիտաւորութիւնից: Ընդհանրապէս մեր մէջ (ուսուցիչներէ և տեսչի) օրէ օր տեղի ունեցան խռովութիւններն ու յուզմունքները. աշակերտները աւելի տեսչի կողմը բռնելով, քիտազանց մեղանշել էին, երբ յայտնել էին իրան, որ իբր մեր քանկութիւնն է եղել կաշառել իրանց, և իսկ նամար է որ երբորդ գասարանի աշակերտները իսկ առաւօտ ուսումնարանում պ. պ. Բէկնազարեանցի և Էդիկանեանցի մէջ ունեցած անբարեկամութիւններէ յետոյ, նոյն երեկոյեանը ինձ երկայնքովն մի շարադրած խնդրի պ. Էդիկանեանցի դէմ հօգաւարձութեանը առաջարկելու: Մեր մէջ երկուր խօսակցութիւններէ յետոյ, այսինքն իրանց, որ Էդիկանեանցը մեզ հետ խախտութիւններէ անառջ միշտ զոհուածութիւն էին յայտնում այդ պարտին: Ինչ և ինչ և հասկանալի իրանց, որ մեր մէջ կիտաւորութիւնը չէր զէպի չարը, այլ ուսումնարանի օգտին ամար են և ոչ Բէկնազարեանցին ուսումնարանից հեռացնելու համար: Ոչ, այլ տարաբաղադար չարիտունները համարված էին որ իբր պ. Էդիկանեանցի դիտաւորութիւնն է տեսչութիւնը խռով և մեղ էր որպէս թէ նորա համախոհներն ինչ խնդիր իրան կարողով հօգաւարձութեանը անառջ: Ուրեմն այդ չէ նշանակում, որ աշակերտները ուսուցիչներէ դէմ բողոք բարձրաբերին: Չէ, անհամար, որ մեղ կաշառել ենք այդ ապերախներին: Բողոքը կարող է լինել հինգ ուսուցիչներէ դէմ յիշելով իրանց խնդրի մէջ մի առ մի պ. Բէկնազարեանցի արժանաւայել գործերը և երախտը և ոչ թէ յարձակվելով մի ուսուցչի դէմ սակ թէ մեղ հետ լաւ չէ պարագայում, լաւ չէ խորհրդում... և այլն և այլն: Այդ չեղաւ բողոք. ուրեմն ես էլ ինձ թող տամ կարծելու, որ աշակերտները անսպից կաշառված էին... որոնց ամար պ. Բէկնազարեանցը խոստանում էր գաւառներում պաշտօններ գտնել տարեկան 300—400—500 բուրբիւ ռոմիկով: Ոչ, եթէ գործի մէջ տուր թափանցեմք, չը պէտք է այդպիսի անհիմն յարձիգներ ստեղծել: Երբեմն այս էլ կայ, որ այլ և այլ հանգամանքներ տեղիք են տալիս կարծելու, ինչպէս պ. Բէկնազարեանցը մեր դէպի չքաւոր աշակերտներն ունեցած անկեղծ վարմունքը և ուղղութիւնը փոխարինել էր դէպի չարը: Ոչ այն, և ոչ այս, եթէ ճիշդ քննելու լինեց, երկու կողմիցն էլ անպատասխան արդարացի են եղել:

Շաւարչեան

Որովհետեւ ՎՄշակի երկկայ համարում առաջնորդող յօդուածը չը կարողացաւ մտնել, մեծ ստիպվեցանք այդ համարը հրատարակել կէս թերթի մեծութեամբ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՍԱՆ

Անցեալ տարի թէ հիշխնական ժողովրդի և թէ նրա կառավարութեան ուշադրութիւնը դիտաւորապէս երեք նշանաւոր հարցերով էր զբաղված, այդ հարցերից առաջին տեղը բռնում էր յոյն-թուրքական սահմանադրութիւնը: Երբեք 60 միլիոն զբաղմայի փոխառութիւնը, և երբորդ՝ նոր պատգամաւորներ ընտրութիւնները, որովհետեւ հենց այդ ձեռնաժամի միջոցին էր, երբ արձակվեցաւ ազգային նախկին ժողովը:

Սահմանադրութիւնը զբաղադրապէս մինչև այժմ էլ դեռ մնում է անշնչ, և այժմ յոյները օրից օր աւելի ու աւելի են համոզուում, որ եթէ նրանց կառավարութիւնն ուշադրութիւն չը դարձնէր սահմանադրութեան կարինէի ցնորամիտ խորհուրդներին, և չէր զը չը մնար 1877—1878-ի ռուս-թուրքական պատերազմից, այն ժամանակ նրանք, անշուշտ, չէին կորցնի Եպիրոսը և Թէսսալիան Յունաստանի հետ միացնելու յոյսը: Բայց այժմ հաղիւ թէ նրանք համարձակվելն մտածել այդ մասին, թէ և յունական ժողովուրդը երբեք յոյսը չէ կորու՛մ, որ մի աւելի բաղաւոր օր նրան կը լաճողի նորից յետ ստանալ իր երբեմն նուաճված սիրելի նահանգները, որոնք կապված են նրա սրտի հետ պատմական այնքան նուիրական յիշատակներով, բայց մի և նոյն ժամանակ՝ նախորդ կերպով համոզված է, որ այդ նրան, ցանկացածին չափ, շուտ չի յաջողի: Սահմանադրութեան վերաբերութեամբ թիւրք և յոյն գործակատարներ միջ շարունակող բանագնացութիւնները մի տարուց աւել ձգձգվելուց յետոյ էլ, դարձեալ ոչինչ որոշ եզրակացութեան չը հասան, և 1880 թւականը գտաւ այդ հարցը նոյն դրութեան մէջ ինչ դրութեան մէջ, որ նա գտնուում էր դեռ բանագնացութիւնների սկսվելուց առաջ: Թիւրք գործակատարների զործի ձգձգելը և զիսաւոր հարցից յաճախ շեղվելը կարողացան բաւականին կերպով համոզել հիշխնական կառավարութեանը, որ Բ. Կուռը կամք չունի Բերլինի դաշնագրի համաձայն բաւականութիւն տալ այդ հարցին: Հաւանական է երևում, որ յունական կառավարութիւնը շուտով նորից կը դիմէ այն օտար պետութիւնների միջամտութեանը, որոնք ստորագրել են Բերլինի դաշնագիրը, և երկի միայն այդ միջամտութիւնը կը կարողանայ կտրել այն գորգեան հանգոյցը, որ եւրօպական դիպլոմատիան կրեց Բերլինի վեհաժողովում:

Կառավարութիւնը չը կարողացաւ հաստատել 60,000,000 զբաղմայի փոխառութիւնը, որով նա կամեւում էր բարաբը երկրի Ֆինանսական դրութիւնը, և ոչնչացնել թրդ-թաղամի գործածութիւնը. փոխառութեան հաստատուել ձեռն սատիկ բնագործութեան ենթարկվեցաւ ազգային ժողովի մէջ, և պատգամաւորներից շատերը կառավարութեան այս գործը ժողովրդի համար սատիկ վնասակար ճանաչեցին:

Ներկայ կարինէտի և ընդդիմադրական կուսակցութեան մէջ եղած երկարատե կռիւները վերջացան նրանով, որ պարլամենտ արձակվեցաւ, և սկսվեցան նոր ընտրութիւնները: Դեռ անցեալ տարի յուլիսին կառավարութիւնը մի արտակարգ ժողով կազմեց,

որի մէջ պէտք է քննվէին մի քանի այնպիսի հարցեր, որոնց յետաձգելն անկարելի էր: Ժողովի մէջ տեղի ունեցած վիճաբանութիւններն ու վերոյիշեալ հարցերի առիթով կասեցած քուէարկութիւնների հետեանքերը ցոյց տուին, որ ժողովի մեծամասնութիւնը չէ համարում Կուսակցութեան կարինէտին, այդ պատճառով էլ այն ժամանակվայ բոլոր միւնիստրները միասին հրաժարական տուին: Այս դէպքից յետոյ, թագաւորը հրաւիրեց իր մօտ ընդդիմադրական կուսակցութեան առաջնորդ Զաիմիսին և Տրիկուպիսին, և իմանալով նրանցից, որ նրանք նոր կարինէտ չեն կազմի, մինչև թոյլտուութիւն չըստանան արձակել ազգային ժողովը, այն ժամանակ նա չընդունեց Կուսակցութեան հրաժարականը, բայց թող տուեց նրան հարկաւոր դէպքում արձակել ազգային ժողովը, և նոր ընտրութիւններ կազմել: Յուլիսի 14-ին կայացած նիստի միջոցին, սատիկ աղմկալի վիճաբանութիւններից յետոյ, Կուսակցութեան յայտնեց ժողովին, որ թագաւորն արձակում է ժողովը: Յաջորդ աշնան ընտրութիւնների մէջ բազմաթիւ նոր կանդիդատներ կային, հոկտեմբերի 20-ին թագաւորն ինքն անձամբ բացեց նոր ժողովը՝ առաջին նիստը: Ժողովի նահագահ այս անգամ ընտրված էր պ. Սօսիրօպուլու: Ժողովի առաջին նիստերից երկուսը, որ ընդդիմադրական կուսակցութիւնը միտադիր էր արձակել կառավարութեան վրա և հաշիւ պահանջել նրանից, թէ նա ինչ պատճառով արձակեց նախկին ժողովը, և թէ նա ինչպէս է վարվել երկրի հետ բոլոր այն ժամանակ, երբ նա կառավարում էր երկիրն առանց պարլամենտի: Այս բանին պատճառ տուեցին այն վիճաբանութիւնները, որոնք տեղի ունեցան զահական ճառին պատասխանելու համար կազմված մասնաժողովի մէջ:

Որի մէջ հարց էր յարուցանվում կառավարութեան արտաքին քաղաքագիտութեան վերաբերութեամբ: Միւնիստրների նախագահ Կուսակցութեանը դեռ ևս վիճաբանութիւններից առաջ յայտնեց ժողովին, որ նրա վճիռը այս հարցի վերաբերութեամբ նա կը համարի որպէս զնահատութիւն միւնիստրների թէ քաղաքականութեան և թէ նրանց գործելու եղանակին: Այս պատճառով վիճաբանութիւնները ազգային ժողովում բոլորովն քաղաքական բնաւորութիւն ստացան: Ընդդիմադրական կուսակցութիւնը, Միսոյօնգիի պատգամաւոր Տրիկուպիսի առաջնորդութեամբ մեղադրում էր միւնիստրութիւնը այն բանի մէջ, որ նա պետական գործերը կառավարում էր և այժմ ևս կառավարում է այնպէս, որ վնասում է երկիրն, և որ Կուսակցութեան կարինէտի արտաքին քաղաքականութեան անկանօնութեան շնորհիւ, Ելլադան ստորացած է բոլոր աշխարհի աչքում: Կուսակցութեանը թող տալով բոլոր պատգամաւորներին յայտնել իրանց կարծիքները, պատասխանեց ընդդիմադրական կուսակցութեան բոլոր յարձակմունքների դէմ և, պարզելով ու բացատրելով իր միւնիստրութեան գործելու եղանակը և քաղաքականութիւնը, այնպիսի ճարպիկութեամբ կարողացաւ կառավարութեան պատիւը պաշտպանել, որ ժողովը 99 ձայների բազմութեամբ 71-ի դէմ, ընդունեց այն պատասխանի նախագիծը, որ ուղղված էր իբրեւ պատասխան թագաւորի ճառին, և քաջայերեց Կուսակցութեանը կարինէտի բոլոր գործունէութիւնները:

Ահա թէ ինչով վերջացաւ ընդդիմադրական կուսակցութեան կռիւը կառավարութեան հետ 1879 թւին. ով նրանցից յաղթող կը հանդիսանայ, այժմ նախատեսել անկարելի է, բայց ընդդիմադրական կուսակցութեան առաջնորդները Ժիր են դէպի իրանից գործը, և, երկի շուտով կրկին կարինէտի գլխաւոր ստիպված կը լինի իր պերճախօսութիւնը բանեցնել ընդդիմադրական կուսակցութեան հետեորների դէմ:

Անցեալ տարուայ վերջին նիստերում պարլամենտը կարգադրեց և մի քանի գործեր, որոնցից մեկը կը բաւականանք միայն մէկով, որ մնացած բոլորից ամենածանրակշիւնն է:—Հա, ինչպէս և ամենտեղ, դրամներ, ֆինանսների հարցն է: Պարլամենտը հաշիւը 1880 թւաւ կանի համար նշանակված պետական բոլոր և կամուսները և ծախսերը, որոնցից երևում է, որ պետական եկամուտներից զոյանում է 45,816,457 դրամ, մինչդեռ նրա ծախսերը հաւասարվում են 56,068,792 դրամ: մայի, ուրիշ խօսքով ասած, ծախսերը եկամուտներից 10,252,335 դրամայով աւելի են. դէ՛հիցիտի վերաբերութեամբ, կառավարութիւնը բացատրեց, որ 1880 թւի մի քանի հարկերի աւելացնելու պատճառով, նա յոյս ունի, որ զէ՛հիցիտը 6,000,000 դրամայով կը նուազի. և այդ հարկի մեծացոյն մասը կառավարութիւնը դիտաւորութիւն ունի ծխախոտի վրա դնելու, որից նա սպասում է 2,000,000 դրամ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Վան, 5 յունվարի
Շատ տիտեր լուրեր պէտք է հաղորդեմ ձեզ այսօր: Վանի մէջ սովը հասել է այն կէտին, որ իւրաքանչիւր օր քաղաքի Աղեքստան ասպած մասում մի քանի հատ դիակներ են գտնում այն թըշուառ երեխաների և ծերերի, որոնք թափառում են գետնի միջից բոյսերի արմատներ հանելու և նրանց մէջ կերակուր գտնելու համար: Սովի այդպիսի տաժանութեան պատճառով ուսաց հիւպատոս Կամարականի առաջնորդութեամբ կազմվել է Վանի մէջ մի մասնաժողով, որ ստանում է Ռուսաստանից եկած օգնութիւնը և ժողովրդին է բաժանում:

Թարգման դառնալով մասնաժողովի մտքերին, խնդրում ենք ՎՄշակի միջնորդութիւնը սովմահի առաջն առնելու համար: Ձը նայելով որ Վանի երիտասարդութիւնը զօրեղ կերպով օգնում է և պրօպագանդա է անում, բայց դարձեալ նա խիստ անզօր է պահելու ժողովուրդը ցիր ու ցան լինելուց, եթէ միայն յապաղեն ուսանայիք իրանց ձեռքը թշուառներին մեկնելու:

Խրիման հայրիկը արդէն վանում է նա ամեն օր եկեղեցու սեղանն է բարձրանում քարոզելու, բայց ժողովրդի ազդարկ լսելով՝ «հայ, հայրիկ, հայ...» նա թուլանում է սեղանի վրա և եկեղեցուց նրան ձեռքերի վրա են դուրս տանում:

Անգլիական հիւպատոսը չափ նամակներ է ուղարկում անգլիական լրագիրներին, նկարագրելով սարսափելի պատկերներ խեղճ սովառանջ ժողովրդի դրութենից և օգնութիւն է խնդրում անգլիական ժողովրդից, բայց ինչպէս երևում է, պաշտօնական կերպով նրան ոչ ոք չէ խրախուսում, որովհետեւ ինչպե՛ս այնքի կրկնել և կոտորվիլը, հայոց ազգի կատարելապէս ոչնչանալը թէ Անգլիայի և թէ Թուրքիայի քաղաքականութեան համար ձեռնուում է:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ
Ս. ՊԵՏԵՐԲՈՒԴ, 7 փետրվարի, Պետերբուրգի զինուորական չըձանին, փետրվարի 6-ին տուած հրամանում ասված է, զերեկ, երեկոյան ժամը 7-ին, զմերային պալատի գլխաւոր պահպանոցի տակ, զմիամիտի նշանաւոր քանակութեան վառվելուց առաջացաւ ճայթիւն: Ընտրելով Բարձրագոյն ճայի ժամանակը և ուղղելով հարուածը կայսրի սեղանատունը քանդելու, յանդուգն չարագործը, անկերն կերպով, գործնով մերկացրեց իր դժուկային դիտաւորութիւնը կայսրի անձնաւորութեան կեանքին ձեռնամուկ լինելու: Առեւտած վրկից իր թծալի թանգագին կեանքը, կրկին ցոյց տալով իր անպատմելի և մեծ ոգորմութիւնը, որի համար չափանք չնորակաւորվաւ յայտնել ջերմեանը և միահամուռ աղօթքով: Ստորագրված է Գուրկօ:
Ս. ՊԵՏԵՐԲՈՒԴ, 7 փետրվարի, երէկ բոլոր եկեղեցիներում շնորակաւորեան մաղթանքներ են կատարվել:
Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ